Հայ գրականության օլիմպիադա- 2017

Մարզային փուլ

X դասարան (տևողությունը՝ 150ր.)

1.Ի՞նչ գիտես հայոց դիցարանի մասին. համեմատի՛ր այն հունական դիցարանի հետ. Զուգահեռներ անցկացրո՛ւ համարժեք աստվածների միջև՝ նշելով անունները և մարմնավորած աստվածությունները:

(5մ.)

2.Մեկնաբանի՛ր «Վահագն» առասպելը. գրի՛ր բանաստեղծությունը. բացատրի՛ր երաժշտականության գաղտնիքը:

Ի դեմս Վահագնի՝ ու՞մ է տեսել մեր ժողովուրդը: (5մ.)

3.Ո՞րն է առասպելի և վիպերգի տարբերությունը (1մ.): Ո՞ր վիպերգից է «Արտաշես և Սաթենիկ» դրվագը (0,5): Մեկնաբանի՛ր վիպերգի գաղափարը (1մ.): Գրի՛ր Սաթենիկին փախցնելու տեսարանը նկարագրող հատվածը գրաբարով (2,5):

(5մ.)

4.Հայ հանճարներից ո՞վ է դասվել տիեզերական սրբերի շարքը՝ ստանալով Տիեզերական վարդապետ տիտղոսը (1մ.):

Ի՞նչ նորություն է բերել այդ բանաստեղծը հայ գրականության մեջ (1մ.):

Մեկնաբանի՛ր՝ «Ես եմ բոլորը, և բոլոր մարդկանց մեղքերն են իմ մեջ» (1մ):

Ո՞րն է բանաստեղծի մեղքը. ունե՞ր արդյոք նա մեղք (1մ.):

Նամակով դիմի՛ր այդ հեղինակին և հակադրվի՛ր կամ համաձայնվի՛ր նրա հետ (1մ):

(5մ.)

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան